Հավելված
ՀՀ փոխվարչապետի
N 890 - Ա որոշման

«ԼԵԶՎԻ ԴԱՍԸՆԹԱՑ»
ԾՐԱԳԻՐ

1.	Ծրագրի նպատակը	«Լեզվի դասընթաց» ծրագրի նպատակն է ՀՀ ՊՆ աշխատակիցների համար օտար լեզվի վեցամսյա դասընթացներ կազմակերպելը և անցկացնելը:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օրենքով սահմանված կարգով օգտվել ՀՀ հարկերի, տուրքերի և պարտադիր վճարների գծով արտոնություններից:
3.	Բարեգործը	Հայկական բարեգործական ընդհանուր միություն (ՀԲԸՄ), 55 Արևելք, 59-րդ փող. Նյու Յորք, NY 10022-1112:
4.	Ծրագիրը կատարողը	Հայկական բարեգործական ընդհանուր միության (ՀԲԸՄ) Հայաստանի ներկայացուցչություն (ՀՀ, ք. Երևան, Բաղրամյան 40, ՀՎՀՀ 00006479):
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Հայաստանի Հանրապետություն, քաղ. Երևան, կրթական:
6.	Ծրագրի բյուջեն	1 091 274 դրամ:
7.	Բարեգործություն ստացողը	ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ընտրված մասնակիցներ: Ցանկը հաստատվում է ՀՀ Պաշտպանության նախարարի կողմից համապատասխան հրամանով:
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2021 թ. հոկտեմբերի 30 -ից մինչև 2022 թ. ապրիլի 30-ը:
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Նախատեսվում են ընդհանուր առմամբ 6-ամսյա դասընթաց ՀՀ ՊՆ կողմից ընտրված աշխատակիցների համար ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի (այդ թվում լինգաֆոնային) դասասենյակներում: Դասընթացը անց է կացվելու շաբաթական 5 օր (յուրաքանչյուր օր՝ 2 ակադեմիական ժամ տևողությամբ): Դասընթացի ընդհանուր բյուջեն կազմում է 1 091 274 (մեկ միլիոն ինսունմեկ հազար երկու հարյուր յոթանասունչորս) դրամ՝ առանց ԱԱՀ:

10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	Երևանի պետական համալսարանին պատվիրել կազմակերպելու և համակարգելու օտար լեզվի 6-ամսյա դասընթաց՝ 1 091 274 (մեկ միլիոն ինսունմեկ հազար երկու հարյուր յոթանասունչորս) դրամ արժողությամբ՝ առանց ԱԱՀ:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների և այլ մարմինների հետ	ՀՀ ՊՆ
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	ՀՀ կառավարության 2003 թ. հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Ս. ՊԱՊԻԿՅԱՆ

04.11.2021
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ